

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՐՈՇԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՄՈՒԹՅԱՆ ՈՐԲԱԽՆԱՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
1910-1930- ԱԿԱՆ ԹԹ.
ԷՂՈՒՐԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ**

«Մենք կ'երթանք կոր, ահա, մեր ետև կը մնան հազարատր անտիրական որրեր, փրկեցէք զանոնք ազգը փրկած ըլլալու համար»: 1915թ. ցեղասպանության առաջին գոհերից մեկի՝ Գրիգոր Չոհրապի թողած այս պատգամը շուրջ երկու տասնամյակ ուղեցույց դարձավ հայ ժողովրդի, հայկական ամենատարբեր կազմակերպությունների՝ Հայաստանում, թե նրա սահմաններից դուրս, գործունեության համար: Որքան անմախաղեպ էր Օսմանյան Թուրքիայի կառավարության իրականացրած շուրջ 1,5 միլիոն հայերի ցեղասպանությունը և մնացածների բռնազաղթը, այդչափ անմախաղեպ էր նաև դրա հետևանքով տասնյակ հազարավոր հայ երեխաների որբանալը: Ուզած պետության համար այդ քանակությամբ որբ երեխաների միաժամանակ խնամքը կապված է բազմաթիվ և բազմաբնույթ դժվարությունների հետ:

XXդ. սկզբին հայերը ստիպված էին լուծել այդ խնդիրը անհամեմատ ավելի դժվարին պայմաններում: Սկսած 1918 թվից, նախ Հայաստանի Առաջին, ապա նաև՝ Երկրորդ (Ստրիդրոպյան) Հանրապետությունները՝ իրենց սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական ծանր վիճակի պատճառով, որքան էլ չցանկանային, ըստ էության, անընդունակ էին ինքնուրույնաբար ապահովել մույնիսկ իրենց տարածքում ապաստանած որբերի խնամատարությունը: Առավել ողբերգական էր Թուրքիայի և այլ երկրների տարածքում մնացած որբերի ճակատագիրը, որոնց խնամատարության գործի հիմնական ստանձնողը դարձավ արտասահմանի հայությունը՝ ի դեմս ազգային տարբեր կազմակերպությունների, ինչպես նաև որոշ, այդ թվում հատուկ այդ նպատակով ստեղծված, արտասահմանյան բարեսիրական կազմակերպությունները:՝ Հայկական կազմակերպությունների շարքում հատկապես նշանակալից էր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության որբախնամ գործունեությունը:

1906թ. Կահիրեում հայտնի գործարար և ազգային գործիչ Պողոս Նուբարի և եզիպտահայ համայնքի ինն այլ ականավոր գործիչների կողմից հիմնված ՀԲԸ Միության նպատակն էր՝ նպաստել հայրենաբնակ հայ ժողովրդի մտավոր և բարոյական զարգացմանը, նրա նյութական և տնտեսական կացության բարելավմանը: Առաջին համաշխարհա-

յին պատերազմի մախոթեին Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Օսմանյան կայսրության հայաշատ այլ շրջաններում, ուր գործում էր ՀԲԸ Միության 59 տեղակալ մասնաճյուղ, այն հիմնել էր 41 դպրոց, վարկեր էր տրամադրում գյուղացիներին, հրատարակում էր «Միութիւն» ամսագիրը և այլն: Նույն այդ տարիներին ՀԲԸ Միությունը Կիլիկիայում Դյորթյուում (Տորք-Եոլ) հիմնեց իր առաջին՝ «Բէլէկեան» որբանոց-դպրոցը: Հայաբնակ այդ գյուղաքաղաքը հայանի դարձավ 1909թ., երբ նրա բնակիչները տեղեկանալով Ադանայի հայերի զանգվածային սպանությունների մասին, ի տարբերություն շատ ուրիշների, դիմեցին ինքնապաշտպանության: 13 օր շարունակ ետ մղելով թուրքերի, այդ թվում նաև կանոնավոր բանակի բոլոր հարձակումները, նրանք, ի վերջո, ստիպեցին թուրքերին դադարեցնել հարձակումները, նրանք, ի վերջո, ստիպեցին թուրքերին դադարեցնել հարձակումները: Կիլիկիայի հայության համընդհանուր ուշադրության կենտրոնում: Ենտո Դյորթյուը հայտնվեց համընդհանուր ուշադրության կենտրոնում: Դրա դրսևորումներից էր, մասնավորապես, եվրոպական ճանաչում վայելող մեծահարուստ, հնահավաք, ՀԲԸ Միության ականավոր գործիչ Տիգրան Բելէկյանի մեծագումար մվիրատվությունը՝ այդ գյուղաքաղաքում որբանոց-դպրոց կառուցելու նպատակով: «Բէլէկեան» որբանոց-դպրոցի բացումը կատարվեց 1912թ. հուլիտներին, նրա առաջին սաներն էին Կիլիկիայի տարբեր վայրերից 11-14 տարեկան 95 որբ տղաներ, որոնք պետք է ուսանեին 5 տարի և ստանային «...գործնական կրթութիւն մը, որպէսզի դպրոցական շրջանին լրանալուն՝ կարենան իրենց ծննդավայրին մէջ դիրտա շահիլ իրենց ապրուստը»: Այդ ծրագրերը, սակայն, մնացին անավարտ, քանզի 1915թ. որբանոցի գործունեությունն ընդհանուրով:

1915թ. ապրիլին սկիզբ առած ցեղասպանության իրողությունը արտասահմանի հայությանը հայտնի դարձավ մի քանի ամիս անց միայն: Սակայն ընթացող պատերազմն անհնարին էր դարձնում որևէ օգնություն իրենց հայրենակիցներին: Այդպիսի հնարավորություն ստեղծվեց 1915թ. սեպտեմբերին, երբ ֆրանսիական նավերով Եգիպտոս՝ Պորտ Սաիդ էին փոխադրվել 4058 մուսալեոյցիներ, որոնք ավելի քան մեկ ամիս դիմազրավել էին թուրքական գործերի հարձակումներին: ՀԲԸ Միությունը, տեղեկանալով մուսալեոյցիների ժամանման մասին, որոշեց ստանձնել երեխաների կրթական գործը և ապահովել նրանց զգեստավորումը: Նույն թվի հոկտեմբերի 20-ին Պորտ Սաիդի մուսալեոյցիները հայապատային դաշտում, ուր հիմնվել էր մուսալեոյցիների վրանային ավանը, բացվեց «Միսուան» վարժարանը, իր 25 վրան-դասարաններով: 1917թ. վարժարանում անգլիական սպաների գլխավորությամբ հիմնված հայ-արիներու (բոյ-սկաուտ) կազմակերպության սաները որոշ ժամանակ անց կազմեցին «Արևելյան (Հայկական) Լեգեոնի» կորիզը, որը 1918թ. սեպտեմբերին ֆրանսիական բանակի կազմում պարսուրյան մատնեց թուրքական բանակը՝ Արարայի ճակատամարտում:

Այդ թվականից թուրքերից ազատագրված շրջաններից Պորտ Սաիդ սկսեցին փոխադրվել հայ գաղթականներ: Որք երեխաները նախապես տեղավորվեցին «Միսուան» վարժարանում, սակայն, նկատի առնելով նրանց քանակը, ՀԲԸ Միությունը ստիպված էր հիմնել որբանոց, ուր 1919թ. դաստիարակվում էր շուրջ 400 երեխա: Միաժամանակ Միությունը հիմնեց նաև այլիանոց, ուր տեղավորվեցին Բաղդադից փոխադրված այլիներն ու աղջիկները՝ «... շատերը իրենց թուրք դահիճներուն կամ արաբ պաշտպաններուն ձեռքէն խլուած»: «Միսուան» վարժարանը, որբանոցը և

այրիանոցը ՀԲԸ Միություն՝ Հայաստանի և Կիլիկիայի սահմաններից դուրս հիմնած առաջին հաստատություններն էին:

Այն բանից հետո, երբ 1918թ. հոկտեմբերին Թուրքիան ճանաչեց իր պարտությունը Առաջին Համաշխարհային պատերազմում, սկսվեց հայ գաղթականների վերադարձը հայրենիք: Վերադառնում էր նաև ՀԲԸ Միությունը, նպատակ ունենալով, սակայն, նախ և առաջ շարունակել որբ երեխաների խնամատարության գործը: Նպատակների մասն հարկադրված փոփոխմամբ Միությունը մեծ պատասխանատվություն էր ստանձնում ողջ հայության առջև, բանգի, ֆրանսիացի գնդապետ Բրեմոնի խոսքերով ասած, «Հայկական դատին ամբողջ ապագան այս որբերին կախեալ է»:⁴

1919թ. Միությունը կազմակերպեց Պորտ-Սաիդի իր երեք հաստատությունների տեղափոխումը Կիլիկիա: Որբանոցն իր ողջ կազմով հաստատվեց Մերսինում: 1921թ. սկզբին Մերսինի երկսեռ որբանոցը հաշվում էր 404 երեխա, որոնք ուսանում էին բարձրագույն նախակրթարանի ծրագրով: Այստեղ նույնպես ստեղծվեց 120 անդամ ունեցող հայ-արիմներու կազմակերպությունը, ինչպես նաև արհեստանոց: Այրիանոցը ՀԲԸ Միությունը հիմնեց Արամայում: Նրա գորգագործական արհեստանոցում աշխատում և իրենց ապրուստն էին ապահովում շուրջ 350 այրիներ և աղջիկներ: Ինչ վերաբերում է «Միսուան» վարժարանին, ապա որոշվեց մեկ մեծ դպրոցի փոխարեն «Միսուան վարժարաններ» ընդհանուր անվան տակ մեկական դպրոց բացել Սուեդիայի վեց գյուղերում: Ընդհանուր դասավանդողների Քեբուսիե, Հաջի-Հաբիբի, Բիթիաս, Յողունօլուր, Խդրբեկ և Վազըֆ գյուղերն առաջին անգամ ունեցան սեփական ազգային դպրոցներ, որոնցում 1921թ. ուսանում էր 679 աշակերտ:

Կարևոր ձեռնարկում էր «Բլեյկեան» որբանոցի վերաբացումը, ուր տեղավորվեցին շրջակա վայրերի որբացած ավելի քան 200 երեխաներ: Դյորքոլի շրջանում պատերազմական գործողությունները չէին դադարում: «Թշնամիին գնդակներու սուլոցին արդեն վարժուած են մեր ականջները: Որբանոցին մէջ ամէն ոք իր պարտականութիւնը կը կատարէ, առանց ազդուելու դուրսի անցուղարձերէն՝ որոնք այնքան մօտիկ են մեզի...»:⁵ Հակառակ տիրող անապահով վիճակին, վերադարձած հայերի, ներառյալ որբերի, թիվն այնքան մեծ էր, որ Միությունը նույն՝ 1919թ. վերջերին հիմնեց ևս մեկ «Միսուան» որբանոց, որի սաները դարձան մոտ 300 երեխաներ:

Ինչպես հայտնի է 1918թ. Մուրտսի զինադադարի կնքումից հետո՝ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Կիլիկիա տեղափոխվեց նաև Հայկական Լեզեոնը: Բայց քանի որ նրա ուժերը քավարար չէին ռազմական և վարչական հսկողություն սահմանելու համար, ապա 1919թ. սկզբներին Կիլիկիայում տեղակայվեցին անգլիական զորամասեր, որոնք նոյեմբերին փոխարինվեցին ֆրանսիական զորամասերով: «Ֆրանսիական վարչությունը, սակայն, ոչ մի միջոց չէր ձեռնարկում հայերի անվտանգությունը ապահովելու համար»:⁶

1920թ. հոկտեմբերին ուրամսյա մարտերից հետո քեմալական զորքերը գրավեցին Հաճընը և ոչնչացրին քաղաքի գրեթե ողջ բնակչությանը, այդ թվում նաև Միության նորաստեղծ որբանոցի սաներին: «...Որբանոցին տեսուչ տ. Լեոն Փափագեան կը նախընտրէ իր կիմն ու աղջիկը սպանել քան թողուլ թուրքերուն ձեռքը, և ինք իսկ, ուժասպառ, իր խնդրանքով կը սպաննուի պաշտոնակցի մը՝ տ. Ղ. Պաղտիկեանի կողմէ, որ նոյնպէս զօհ պիտի երթար սպանողին: Թուրքերը, նոյն ատեն քաղաքը իրկիզելով, բոցերուն մէջ կը նետեն որբերը, որոնց ամբողջացած

տուան» որբանոց: 1928թ. մայիսին այստեղ տեղափոխվեցին մաս մաս Լիբանանի ճունիե քաղաքում Եզիպտոսի Որբախնամ Ընկերության կողմից հիմնած որբանոցի 65 ամերը, ապա՝ 53 որբեր Կեսարիայից:

Որոշ ժամանակ անց հայտնի դարձավ, որ Կեսարիայում հավաքվել է որբերի մի նոր խումբ, որի մասին Ամերիկյան Նպաստամատույցի (Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտե, Ամերկոմ, Նիր Իսթ Բըլիյֆ. -Էդ. Մ.) ներկայացուցիչ տիկին Ա. Դուայթը հետևյալ տեղեկություններն էր հայտնում Միությանը. «Կեսարիոյ մէջ զանազան վայրերէ հաւաքուած խնդրոյ նիւթ որբերուն թիւն է 61, որոնց 35-ը մանչ եւ 26-ը աղջիկ: Ատոնցմէ 26-ը 6-9 տարեկան են, 33 ը 10-15, եւ երկուքն ալ 17 եւ 19 տարեկան: Ութը միայն անձնող որբեր են, տարագրութենէ առաջ ծնած. մնացեալները, մասամբ ծնողք ունին կամ զոնէ մայր մը, որ սակայն լքած են իրենց զավակները: Կեսարիոյ որբանոցը դրկելով, այդ ծնողքներէն կամ մայրերէն շատեր կրկնամուսնացած են, ոմանք թուրքերու հետ եւ ոմանք ալ չքավոր են եւ իրենց զավակներով չեն կրնար զբաղուիլ»:¹⁰ ՀԲԸ Միությունը, չնայած դժվարություններին, ստանձնեց մաս Կեսարիայի որբերի երկրորդ խմբի հոգատարությունը: Քիչ անց, 1930թ. կեսերին Միությունը սկսեց «թախանձագին» դիմումներ ստանալ Կեսարիայի որբերի ևս մեկ, արդեն երրորդ խմբին պատասպարելու խնդրանքներով: Այս երեխաների տեղավորման հետ կապված հարցերի կարգավորումը եղավ Գալուստ Կյուլպենկյանի, որպես Միության նորընտիր մախագահի գործունեության առաջին քայլերից մեկը: Նրա՝ աշխարհի այդ ժամանակվա ամենահարուստ և ամենաազդեցիկ մարդկանցից մեկի, առաջին իսկ դիմումը բավական եղավ, որպեսզի ֆրանսիական իշխանությունները, որոնք մինչ այդ ամիսներ շարունակ հրաժարվում էին մուտքի թույլտվություն տալ որբ երեխաներին, անմիջապես լուծեին այդ հարցը: Նա մաս հանձն առավ այդ որբերի ընդունման, տեղավորման, խնամքի և այլ նպատակների համար տարեկան հատկացնել 600 անգլ. ոսկի: Այսպիսով, 1926 և 1928-1931թթ. Միության Բեյրութի «Քէլէկյան-Միսուան» որբանոց ընդունվեց կամ տեղավորվեց շուրջ 500 որբ երեխա: Բացի այդ, յուրաքանչյուր տարի այդտեղ որոշ թվով որբեր էին բերվում ամենատարբեր վայրերից:

Երեխաների բազմակողմանի զարգացման նպատակով որբանոցում կրթական ծրագրից բացի գործում էին մաս կրոնագիտության և բարոյագիտության դասընթացներ, սկառտական կազմակերպությունը, փողային նվազախումբը և պարախումբը: Եվ պատահական չէր, որ «... օրումն նորահաս երիտասարդութիւնը որ կապրի Պէյրութի մէջ, մախապատուութիւն տալով Միսուանի չափահաս որբուհիներուն սիրայօժար կուզէ իր կեանքը կապիլ անոնց հետ...»:¹¹ Հայտնի բարեսեր էնտընի Կրաֆտ-Բոննարի խոսքերով «Բարեգործականին հովանաւորութիւնը վայելող Քէլէկեան-Միսուան որբանոցը ոչ միայն Բարեգործականի այլ բոլոր հայութեան պատուաբեր հաստատութիւն մըն է: Ես երբեք չէի խորհէր թէ այսքան բազմաձախս եւ կանոնաւոր որբանոց մը կրնար գոյութիւն ունենալ հայ ազգին ներկայ տազնապալի օրերուն»:¹² ՀԲԸ Միության Բեյրութի «Քէլէկեան-Միսուան» երկսեռ որբանոցն իր դռները վերջնականապես փակեց հիմնումից 13 տարի անց՝ 1932թ. հոկտեմբերին:

Դեռևս 1921թ. կեսերին հայտնի դարձավ, որ Միջագետքի (Իրաքի) քրիտանական իշխանությունները որոշում են կայացրել փակել Նահր-էլ-Օմարում գտնվող գաղթակայանը, ուր ապաստանել էին մաս մեծ թվով

կորյանց վանքի Պահջե (Պարտիզակ) և Ջամ (Շոճեստան) թաղերը: Երեխաների փոխադրության, ընդունման և տեղավորման հարցերով առաջին իսկ օրերից զբաղվում էր Միության Գործադիր ժողովը, Կրթական և Որբախնամ Կենտրոնական հանձնախմբերը, սակայն, անհրաժեշտ նկատվեց հենց տեղում՝ Երուսաղեմում ստեղծել հատուկ Խճամակալություն, որը կազմակերպում և համակարգում էր ողջ աշխատանքը: Երեխաները, այդ թվում՝ Միության Մոսկվա որբանոցի 47 սաներ, հասան Երուսաղեմ 1922թ. փետրվարին:

Այդ տարիներին հայերի հոգեվիճակի, որբերի նկատմամբ նրանց յուրահատուկ վերաբերմունքի դրսևորումներից էր հետևյալ միջադեպը, որ տեղի էր ունեցել մինչ այդ՝ Միջագետքից նրանց մեկնելու պահին: «816 որբերուն հետ շոգենա մտած էին երկու որբուհիներ ևս, Տոպաճեան քոյրերը, օր. Մաննիկ և Ատրիմէ: Բայց անոնց ճակատագիրը այլապես տնօրինուած էր: Միջագետքի Տարագրելոց Նպաստամատոյց Մարմնի անխոնջ ատենապետը Տ. Մարտիրոս Գույումճեան, որ բոլորանուէր տրամադրուած էր այդ շրջանի որբախնամ գործին, և իր գործակիցը Տ. Ստեփան Փափագեան (նոյն Մարմնոյ ատենադպիրը), որ օրերով զբաղուած էին որբերուն ուղեւորութեան յարակից բոլոր խնդիրներով և մինչև շոգենա առաջնորդած էին իրենք, անակնունելի որոշում մը կուտան վերջին պահուն, կնութեան ամենով երկու քոյրերը, իբրեւ կենդանի յիշատակը այդ դժբախտ էակներուն հանդէպ իրենց տածած սրտցա խանդաղատանքին: Որբերուն ընկերակցող քահանան, Տէր Յովհաննէս Սիմոնեան, նոյնիետայն կը կատարէ կրկին պսակի խորհուրդը, սրտառուջ արարողոթյամբ մը, և նաւապետը, փոխարկուելով հանդիսապետի, շոգենաւը խրախճանքի գեղեցիկ ոգեւորութեամբ մը լեցնէ»:¹⁶

Երուսաղեմում նրանց դիմավորեցին Հայոց Պատրիարքը, Միության մասնաճյուղի և Խճամակալության պատվիրակները, ինչպես նաև մեծ թվով տեղացի հայեր: Ժամանած որբերի թվում էր նաև Նոյեմգար Մալխասայան-Վարդանյանը, որն իր հուշագրություններում այսպես է նկարագրել իրենց մուտքը Երուսաղեմ. «Բազմութիւն. այլազան տարագով մարդիկ ու կիներ: Բայց ամենէն անելի մեր ուշադրութիւնը զրաւեցին խումբ մը սեւազգեստ մարդիկ՝ մանաւանդ իրենց սրածայր գլխարկներով եւ մօրուքներով: Կրօնական տեսած ըլլալս չէի յիշեր ես: Անոնք Ս. Հակոբայ Միաբանութեան բարձրաստիճան կղերականներն էին՝ եկած դիմաւորելու մէզ՝ մեր ցեղին խեղճ բեկորները... Անջնջելի պիտի մնայ միտքիս մէջ՝ վանք մտնելու մեր պահը: Երկինքը ամպամած էր արդեն, եւ երբ հասանք, սկսաւ մեղմօրէն անձրեւել. բակին մէջ հաւաքուած էին տեղացի հայեր. բոլորն ալ աչքերը թաց էին, եւ շատեր կու լային: Ես ալ լացի, որովհետեւ ամէն մարդ կու լար՝ հակառակ որ ուրախ էի հոն գտնուելուս համար... Ահա մեզի մօտեցան ճերմակ գոգնոցներ հագած կիներ ու մարդիկ. սափրիչներն էին, եւ իրենց պարտականութիւնն էր մեզ ազատել մեր ոջիւներէն ու անիծներէն, ապա՝ լոզցնել ու մաքրել...: Յետոյ մեզի տուին նորևնոր հագուստներ, աղոտոր ուտելիք, եւ տարին ննջարաններ: Մեր ուրախ աղմուկը լեցուցած էր մթնոլորտը. ի՞նչ զսպանակաւոր մահճակալներ էին ատոնք՝ ներքնակով, բարձով ու վերմակով...: Չէինք կրնար հաւատալ որ այդ բոլորը մեզի համար էին. ու կը ցատքէինք, կը պոռայինք. կարծես դժոխքէն անցած որբերը չէինք...: Առաւօտուն՝ առատ նախաճաշ, ապա՝ ճաշ ու ընթրիք, եւ այսպէս՝ ամէն օր...: Փոխուած էր աշխարհ...»:¹⁷

Նորաստեղծ «Արարատեան» որբանոցի (այդպես կոչվեց, նկատի առնելով որբերի ծննդավայրը՝ 816 որբերից 582-ը Վանից էին, իսկ 103-ը Էրզրումից) գործունեության առաջին մի քանի ամիսներից հետո պարզ դար-

ծայն լալ: Շուտով զինք հիւրանոց տարին: Ես զարմացած էի եւ յուսախաբ. զարմացած էի, որ անծանօթ սեւ թագուհի մը կու լար մեզի համար, ուրեմն՝ կը գթար մեզի եւ կը սիրէր մեզ... իսկ յուսախաբ էի, որ հանդիսութիւնը աւարտած էր տակաւին չսկսած...»²¹

Միության որբանոցների ղեկավարության հետ ունեցած զրույցի ժամանակ իշխանուհին, ծանոթանալով որբանոցների հիմնադրման հանգամանքների հետ, նվիրատվություն է անում արհեստավոր սաներին գործիքներ գնելու համար, ինչպես նաև խոստանում ի նպաստ հայ որբերի մի շարժում սկսել իր երկրում: Մոտ մեկ տարի անց Երուսաղեմ է այցելում նրա ամուսինը՝ գահաժառանգ իշխան Բաս Թաֆարի Մարոնները, որը տարիներ անց Հայն Սելասիյե անունով հռչակվեց Եթովպիայի կայսր և եղավ Աֆրիկայի ամենահայտնի պետական գործիչներից մեկը: Երուսաղեմում իշխանը նույնպես այցելում է Հայոց Պատրիարքարանը, ուր նրան դիմավորողների թվում էր նաև Արարատեան որբանոցի «Ֆանֆառի խումբը»: Իշխանը, լսելով խմբի նվազը, ցանկություն է հայտնում այն կազմող 40 տղաներին, իրենց երաժշտական ուսուցչի և տեսուչի հետ միասին տանել Եթովպիա: Եվ քանի որ նրանք պետք է դառնային իր անձնական, նաև կառավարության պաշտոնական նվազախումբը, իշխանը պարտավորվեց հոգալ նրանց ճանապարհածախսը, իսկ Եթովպիայում՝ ապահովել նրանց թոշակով, բնակարանով, հագուստով և այլն: Դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի զգացմունքներ ապրեց որբանոցի ղեկավարությունը, ստանալով այդօրինակ անսպասելի առաջարկություն, որը երաշխավորվում էր մի քանի տասնյակ որբերի ապահով կյանքը այդ դժվարին տարիներին:

1924թ. սեպտեմբերին «Ֆանֆառի խումբը» արդեն Եթովպիայի մայրաքաղաք Ադիս-Աբեբայում էր, ուր նրան դիմավորեցին պաշտոնական անձինք և տեղի հայ համայնքի ներկայացուցիչները: Նվազախմբի անդամներից էր նաև Նոյեմզար Մալխասյան-Վարդանյանի եղբայրը՝ Հովհաննես Մալխասյանը, որն իր հուշերում այսպես է նկարագրել այդ օրը. «1924թ. սեպտեմբերի 6-ին կառայախումբով հասանք Եթովպիոյ: Եթովպական օրացոյցով Նոր տարի է այդ օրը եւ ամեն կողմ տոնի տրամադրութիւն կար: Երգ, պար, խարոյկներով խումբ երիտասարդներ կը վազէին դուռն դուռ, կերգէին եւ նուէր մը ստանալէ յետոյ կերթային յաջորդ դռան: ... Բոլոր հայութիւնը մեզի դիմաւորելու եկած էր կայաքան: Չեսակերպութիւններէ յետոյ միակ հայը որ «քամիոն» ունէր, մեզ իր «քամիոնով» պիտի տանէր մեր նոր բնակարանը, որը գահընկէց իշխան Լիճ Եասուի հիւրանոցներէն մէկն էր»:²² Ժամանան հաջորդ օրը նվազախմբի անդամներին ընդունեց գահաժառանգ իշխանը, որը ողջունելով նրանց, ասաց. «Դուք իմ զաւակներս էք, երեք բանի մը վրայ մի մտածէք, ձեզ զաւակներուս պէս պիտի նայիմ»:²³

Իշխանի կարգադրությամբ նվազախմբի տղաները հետևեցին նաև որոշ արհեստների, ինչի շնորհիվ էլ տարիներ անց, երբ «Ֆանֆառի խումբը» որպես այդպիսին դադարեց իր գոյությունը, նրանք առանց դժվարությունների ապահովեցին իրենց ընտանիքների բարեկեցիկ կյանքը: Նրանք եղան ոչ միայն լավ երաժիշտներ, այլև իրենց նոր հայրենիքի հավատարիմ քաղաքացիներ: «Եթովպիա-Իտալական պատերազմի միջոցին, մեր 40 տղաքը, - վերսիշում էր Հ. Մալխասյանը, - որոնցմէ շատերը քամիոնի տէր եղած էին, եթովպական բանակի մատակարարման մէջ խոշոր գործ տարին, նոյնիսկ զոհեր տալով: Իտալացիները այս գիտէին եւ 1935-1940թթ. իրենց տիրապետութեան շրջանին մեզի լաւ աչքով չնայեցան: Շատերը ստիպուեցան ճիպուիքի փախիլ, որը ֆրանսիական քօլոնի էր: Ուրիշներ աքտորի ենթարկուեցան կղզի մը վրայ: Իսկ անոնք, որ ինձ մման ուղղակի մասնակցութիւն չէին ունեցած, աշխատանքի իրավունք չստացան եւ դժուար կեանք մը ունեցանք»: Նման նվիրվածությունը չմնաց աննկատ. Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Եթովպիայի կայսրը «... բոլոր Եթովպիա գտնուող 40 տղոց խումբին մնացեալներուն նուիրած էր 500 ք.մ. հող իւրաքանչիւրին՝ տուն մը շինելու համար»:²⁴ Նրանք եղան նաև լավ հայրենասերներ եւ միշտ վառ պահեցին երախտագիտության զգացմունքը ՀԲԸ Միության հանդեպ:

1925թ. Նոյ Տարվա առիթով «Փամֆատի խումբը» Ադիս-Աբեբայում կազմակերպեց երամշտական մի երեկույթ, որի ողջ հասույթը ուղարկվեց Միության Գործադիր ժողովին՝ «... տակալին որբանոցներու մէջ մնացող իրենց եղբայրակիցներու օգտին գործածուելու համար»:²⁵

Երուսաղեմի «Արարատեան» և «Վասպուրական» որբանոցները գործեցին շուրջ չորս և կես տարի՝ մինչև 1926թ. մայիսը: Միության Կենտրոնական վարչական ժողովը, հաշվի առնելով, որ որբուհիների մի մասի ամուսնությունը չուիջ 100 որբերի փոխադրման պատճառով որբանոցների սանեթյուններ չուիջ 100 որբերի փոխադրման և փակել այդ երկու որբանոցների թիվը նկատելիորեն նվազել էր, որոշում է փակել այդ երկու որբանոցները, իսկ մնացած սաներին, ինչպես վերը նշվել էր, տեղափոխել Բեյրութ՝ «Զէլէկեան-Միսուան» որբանոց:

1923թ. «Միութիւն» ամսագիրն իր համարներից մեկում գրում էր. «ՀԲԸ Միութեան որբերը մեծնայու վրայ եմ: Անոնք հետզհետեւ չափահասութեան տարիքը կը թեւակոխեն եւ պէտք է հրաժեշտ տան այլեւս զիրենք պատասպարող եւ կրթող հաստատութիւններէն, իրենց տեղը տալու համար անկի փոքրատի իրենց եղբայրներուն եւ քոյրերուն»:²⁶ Ինչպիսի՞նք է լինելու որբանոցներում պատասպարած երեխաների հետագա ճակատագիրը, կկարողանա՞ն արոյոք նրանք ապրել ինքնուրույն կյանքով, ապահովել իրենց գոյությունը՝ այս խնդիրները ծառայեցին Միության ղեկավարության առջև որբանոցների հիմնման առաջին իսկ օրից: Այդ հրատապ խնդրի լուծման համար Միությունն իր բոլոր որբանոցներում ձեռնամուխ եղավ հատուկ ծրագրի իրականացմանը, որի նպատակը սաներին որոշակի արհեստ սովորեցնելն էր:

Թե՛ չափահաս սաների թվի մշտական աճը և թե՛ յուրաքանչյուր որբանոցին կից արհեստանոց հիմնելու ու այնտեղ աշխատանքը կազմակերպելու հետ կապված դժվարություններն ու ծախսերը, նպատակահարմար էին դարձնում հատուկ արհեստանոց-որբանոցի հիմնումը: Նախապատրաստական որոշ աշխատանքից հետո ՀԲԸ Միությունը 1921թ. սեպտեմբերին Հալեպում հիմնեց «Կիլիկեան» արհեստանոց-որբանոցը, որը համալրվեց Միության բոլոր որբանոցների չափահաս սաներով: «Կիլիկեան» արհեստանոց-որբանոցը գործեց մինչև 1926թ., երբ այն փակվեց չափահաս որբերի թվի նվազման պատճառով: Իր գոյության հինգ տարիների ընթացքում այդ հաստատությունում տարբեր արհեստների հետևեցին ՀԲԸ Միության Մերսինի, Դյուբայի, Երուսաղեմի, Բեյրութի որբանոցների 298 չափահաս որբեր: Միության 1925թ. տեղեկագրում հասկանալի հպարտությամբ նշվում էր. «Այս արհեստանոցը մեր որբերում վերջին կայանն էր, ուրկէ անոնք կանցնէին գործի աշխարհը՝ տիրացած արհեստի մը: Անվերապահօրէն կրնանք ըսել թէ Կիլիկեան որբանոց-արհեստանոցը, այս տեսակէտով, իր դերը լիովին կատարած է»:²⁷

ՀԲԸ Միությունը, ձեռնարկելով արհեստանոց-որբանոցների հիմնումը չափահաս որբերի համար, չէր կարող անտեսել չափահաս որբուհիներին: 1918թ. պատերազմի ավարտից հետո, Հալեպում, տեղի հայ առաքելական եկեղեցու առաջնորդարանը հիմնել էր կանանց ապաստարան-աշխատանոց: Մինչև 1920թ. ՀԲԸ Միությունը միայն ամսական նպաստով էր սատարում այդ հաստատությունը, սակայն հետագայում նա ստանձնեց ապաստարանի ողջ մատակարարումն ու պատասխանատվությունը, Հայ Օրիորդաց միությանը վստահելով ներքին հսկողությունն ու աշխատանքների

կազմակերպումը: Այդ նույն ժամանակ դեռ շարունակվում էր անապատներից և հարեմներից որբերի և լքված աղջիկների հավաքման ու ազատագրման գործը, ինչին դրամական միջոցներ էր հատկացնում նաև ՀԲԸ Միությունը: Եվ հենց այդ դժբախտ աղջիկների ու կանանց համար էր նախատեսված Հալեայի ապաստարանը, որը պետք է դառնար «... հանգրուան մը հիւսքուած որբերուն և անտիրական կիներու և աղջիկներու, որ ատեն մը հոն մնալէ յետոյ, մաքրուած, առողջացած և կազդուրուած, աստիճանաբար պիտի դրկուէին իրենց վայրերը, անոք անչափահասները՝ Միութեան որբանոցները, ազգական ունեցող մեծերը՝ իրենց պարագաներուն, իսկ բոլորովին անտէրները՝ Աշխատանոցի բաժնին մէջ իրենց յարմար գործով մը պիտի զբաղուէին»:²⁸ Հետագայում, քաղաքական իրավիճակի փոփոխման պատճառով, թեև տարագրության այդ զոհերի ազատագրումը դարձավ անհնարին, այնուամենայնիվ հաջորդ մի քանի տարիներին ևս որոշ թվով հայ կանայք ու աղջիկներ կարողացան դիմել փախուտի: Նրանցից ոմանք արագ գտնում էին իրենց ազգականներին և միանում նրանց, մյուսները ստիպված ապաստանում էին հատուկ այդ նպատակով հիմնած հաստատություններում, այդ թվում նաև Հալեայի ապաստարանում: 1918-1921թթ. այնտեղ ընդունվել էր 161 հոգի, որոնցից 100-ը որոշ ժամանակ անց ուղարկվեցին իրենց ազգականների մոտ: Հետագա տարիներին ապաստարանում ապրում էր մոտ 50 հոգի, որոնք զբաղվում էին ձեռագործով, գորգերի, գուլպաների պատրաստությամբ՝ կատարած աշխատանքի դիմաց ստանալով որոշ օրավարձ: Հաշվի առնելով իրենց կրած ֆիզիկական և հոգեկան բոլոր տառապանքները, խիստ կարևոր էր Հայ Օրիորդաց միության անդամների հոգատար վերաբերմունքը: «Նկատելի է, որ Ապաստարան նոր մտած աղջիկները կամ կիները ընդհանուր առմամբ վատոյժ, հիւանդոտ, երբեմն զէշ ախտերով վարակուած արգահատելի վիճակ մը կը ներկայացնեն: Մակայն կարճ ժամանակէ մը վերջ անոնք բոլորովին կը բարեփոխուին, շնորհիւ իրենց ստացած մայրական խնամքին և բարոյաբժշկական դարմանումին»:²⁹ Թե՛ ապաստարանում եղած ժամանակ և թե՛ հետագայում նրանք միշտ էլ խուսափեցին խոսել և պատմել իրենց ապրած տառապանքների մասին, ձգտեցին ընդմիշտ ջնջել բոլոր տեսակի հիշողությունները այդ տարիների մասին... 1918-1921թթ. ընթացքում ապաստարանում «... 3 թուրք-հայ նորածիններ մեռած են»:³⁰

Չափահաս որբուհիների համար նույնպես անհրաժեշտ պայմաններ էին ստեղծվել որոշակի մասնագիտություններ ստանալու համար: Արհեստանոց-կարատուն էր գործում Երուսաղեմի «Վասպուրական» որբանոցում, ինչպես նաև Բեյրութի աղջիկների «Սիսուան» որբանոցում, ուր «...պիտի ձեռուին ու կարուին, սանուհիներու կողմէ, որբանոցներու բոլոր հագուստեղենները: Բաց աստի սանուհիները, մասնագետ-վարպետի մը առաջնորդութեամբ, մեքենայով գուլպա հիւսել կը սորվին, որբանոցին արդէն ունեցած երկու գուլպայի մեքենաներուն վրայ»:³¹

Թե որքան հաջող էր ընթանում որբանոցներում սանուհիների դաստիարակությունն ու կրթությունը, արհեստների ձեռք բերումը, խոսում է այն փաստը, որ նրանցից շատերն ամուսնանում էին Երուսաղեմի և Բեյրութի հայ երիտասարդների հետ: «Եւ ամէն հայ ընտանիք կը աշխատի իր զակի մշանածի ընտրութիւնը որբանոցէն ընել, այնպես որ գրեթէ ամեն օր խնդրարկուներու թիւը անպակաս է», - ոգևորությամբ գրում էր Բեյրութից ԱՄՆ ուղարկած թղթակցություններից մեկի հեղինակը և եզրակացնում.

կանօրէն պահուին Բիլիֆի խնամքին ներքեւ: Բայց, անվիճելի եւ նուիրական իրաւունքի մը ուժով անգամ մըն ալ կը բողոքենք Բիլիֆի կրթական ծրագրերին հակահայ ուղղութեան դէմ»: Հիշեցնելով դեռևս 1923թ. ձեռք բերած համա ճայնութիւնները, թերթը նշում էր. «Եւ սակայն... ահա կը մոռցուին հանդիսատար խոստումները, եւ մեր որբերը կը խառնուին յոյներու եւ արաբներու հետ, եւ անոնց կը տրուի այն տեսակ կրթութիւն մը, որ ազգային լեզուն ու գիտակցութիւնը պահպանելէ շատ հեռու է: Աթէնքի «Նոր Օր»-էն կ'իմանանք, որ տեղւոյն Ազգ. Վարչութեան անդամներէն ներկայացուցիչ մը Միրիայի որբանոցն այցելելով՝ կը հարցնէ թէ ինչո՞ւ մանկապարտեզի հայ փոքրիկներուն տոհմային կրթութիւն չը տրուիր: Տնօրէնը, Մր. Հուայթ, ընդունելով հանդերձ «դիտողութեան իրաւացիութիւնը» կը յայտարարէ թէ «մեզի համար տոհմային կրթութիւնը այնքան ալ կարեւոր չէ», եւ կը յարէ, - «մենք որբանոցներուն ներքին քաղաքակրթութիւնը կը վարենք Կեդրոնի իրահանգ ներուն համաձայն»:³⁷

Ինչ վերաբերում է հիշատակած հայ որբ երեխաներին, ապա որոշվեց նրանց Հունաստանից տեղափոխել Եգիպտոս: Կահիրեում և Ալեքսանդրիայում տեղի Հայ Ազգային իշխանությունների օժանդակությամբ և հսկողությամբ որբուհիները տեղավորվեցին հիմնականում հայ ընտանիքներում «... իբրեւ տան աղջիկ կամ սպասուհի»: «Սկզբնական շրջանին բաւական հանգստութիւն վայելեցին այս աղջիկները հայ տուններու մէջ, բայց, քանի մը տարի անցնելէ յետոյ, - նշվում է ՀԲԸ Միության 1928թ. տեղեկագրում, - հետզհետէ երկուստեք անհամաձայնութիւններ ծայր տալով դժուարացուցին այս որբուհիներուն հոգատարութեան ծանր գործը»:³⁸ Ստեղծված իրավիճակում Ազգային իշխանությունները դիմեցին ՀԲԸ Միությանը, որն էլ ստանձնեց շուրջ 300 որբուհիների խնամատարությունը, այդ նպատակով նախ Կահիրեում՝ 1928թ. մայիսին, ապա նաև Ալեքսանդրիայում՝ 1929թ. սեպտեմբերին հիմնելով Աղջկանց կայաններ (Որբուհիներու տուն, Girl's Home), որոնք գործեցին համապատասխանաբար մինչև 1935 և 1933 թթ., երբ «... որբուհիները այլեւս չափահաս ըլլալով, ի վիճակի եղած էին հոգալու իրենց պատասխարումի ծախքերը»:³⁹

ՀԲԸ Միությունը, հիմնելով բոլոր այս հաստատությունները, միևնույն ժամանակ բազմաազգային հայ որբերի խնդրի վերջնական լուծումը տեսնում էր նրանց Խորհրդային Հայաստան տեղափոխելու մեջ. «Այս կերպով անոնց օտար երկիրներ ցրուումին առաջըը պիտի առնուէր մասամբ, - նշում էր ՀԲԸ Միության հիմնադիր Պողոս Նուբարը, - եւ մեր հայրենիքին մէջ բնակող հայերու թիւն ալ նոյն համեմատութեամբ պիտի ստուարանար, ինչ որ մեր ազգին ապագային տեսակէտով մեծագոյն բարիքը պիտի ըլլար»:⁴⁰ Սկսած 1923թ. գարնանից ՀԲԸ Միության և Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչների միջև բանակցություններ ընթացան Միության որբանոցների չափահաս սաներին Հայաստան փոխադրելու հետ կապված տարբեր հարցերի շուրջ:⁴¹ 1924թ. հոկտեմբերին ՀԲԸ Միության Երուսաղեմի «Արարատեան», Բեյրութի «Բէլլէկեան» որբանոցների և Հալեպի «Կիլիկեան» արհեստանոց-որբանոցի 250 չափահաս սաներ Պաղեստինի Յաֆֆա քաղաքից նավով ուղևորվեցին դեպի Բաթում, որտեղից էլ գնացքով մեկնեցին Խորհրդային Հայաստան: Տեղափոխության բոլոր ծախսերն իր վրա վերցնելուց զատ, Միությունը յուրաքանչյուր որբի համար Հայաստանի կառավարությանը վճարեց 100-ական ամերկյան դոլար՝ «... իբր փոխարինութիւն առաջին տարուան անոնց հոգացման ծախքերուն»:⁴² ՀԲԸ Միության որբանոցների սաների այս տեղափոխումը, սակայն, չունե-

ցավ իր շարունակությունը՝ այդ տարիներին Խորհրդային Հայաստանում տիրող խիստ ծանր սոցիալ-տնտեսական վիճակի պատճառով:
 Այսպիսին էր՝ համառոտապես, ՀԲԸ Միության որբախնամ գործունեությունը 1910-1930-ական թթ., որը քե՛ ժամանակակիցների և քե՛ հետագա սերունդների կողմից գնահատվեց որպես մարդասիրության և հայրենասիրության գաղափարներին ծառայելու լավագույն օրինակներից մեկը:

ՄԵՆՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ Յեղասպանության և բռնագաղթի արդյունքում որբացած երեխաների, ինչպես նաև և արտատեսահմանյան տարբեր կազմակերպությունների որբախնամ գործունեության պատմությունը մինչ օրս բավարար չափով ուսումնասիրված չէ: *Վերջին տարիներին նման ուսումնասիրման փորձ արվեց ամերիկահայ Լ. Ազատյանի կողմից*, տես Ազատեան Լիպարիա. Հայ որբերը մեծ եղեռնի, գիրք 1, Լոս Անճելես, 1995, գիրք 2, Լոս Անճելես, 1999:
- ² Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն. տեղեկագիր եւ հաշուէկշիռ 1912-1913, էջ 43: (Հետագայում՝ ՀԲԸՄ-համապատասխան տարեշրջան):
- ³ «Միութիւն», 1919, հ. 66, էջ 90:
- ⁴ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան գործապատումը, Գալիլէ, 1919, էջ 26:
- ⁵ «Միութիւն», 1920, հ. 76, էջ 57:
- ⁶ Հայկական հարց, հանրագիտարան. Երևան, 1996, էջ 185:
- ⁷ Ոսկեմատենան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, 1906-1931, Փարիզ, 1935, էջ 141:
- ⁸ *Джордж Ллойд Джордж. Правда о мирных договорах. т. 2. М., 1957, стр. 416.*
- ⁹ ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվ, ֆ. 430, ց. 1, գ. 332, ք. 6:
- ¹⁰ Ձեկոյց Ընդ. տնօրէնութեան Կեսարիոյ որբերուն մասին - «Միութիւն», 1931, հ. 5, էջ 168:
- ¹¹ «Յուշարար», 1923, հ. 78/83, էջ 770:
- ¹² «Միութիւն», 1930, հ. 137, էջ 265:
- ¹³ Տես Էլչիբեկյան Հ. Վասպուրականի հայերը Միջագետքում և նրանց վերադարձը Սովետական Հայաստան, «Տեղեկագիր ՀՍՍՌ-Գիտությունների Ակադեմիայի. հասարակական գիտություններ», 1949, հ. 2, էջ 17-26; Մելիքսեթյան Հ. Հայրենիք-սկիւտը ամբարշտանները և հայրենադարձությունը, Երևան, 1985, էջ 75-83:
- ¹⁴ «Միութիւն», 1921, հ. 7/8, էջ 52:
- ¹⁵ «Միութիւն», 1921, հ. 11/12, էջ 88:
- ¹⁶ Միջագետքի 816 որբերը ՀԲԸ Միութեան հովանիին տակ Երուսաղէմի մեջ, «Միութիւն», 1922, հ. 1/2, էջ 8-9:
- ¹⁷ Նոյեմբար Մալխասյան-Վարդանյանի հուշագրությունները, ձեռագիր. էջ 12: *Ընդհանրապես ինչպես նաև Մոնրեալում բնակվող Սյրաիչ (Մգօ) Մալխասյանին, որը սիրահոծար տրամադրեց հորաբորոջ՝ Նոյեմբար Մալխասյան-Վարդանյանի և հոր՝ Հովհաննես Մալխասյանի հուշագրությունների պատճենները:*
- ¹⁸ Միութեան Երուսաղէմի Արարատեան որբանոցը. «Միութիւն», 1922, հ. 5/6, էջ 20:
- ¹⁹ Նոյեմբար Մալխասյան-Վարդանեանի հուշագրությունները. էջ 13:
- ²⁰ «Յուշարար», 1923, հ. 81/86, էջ 851:
- ²¹ Նոյեմբար Մալխասյան-Վարդանեանի հուշագրությունները. էջ 13-14:
- ²² Հովհաննես Մալխասյանի հուշագրությունները, ձեռագիր. էջ 12-13:
- ²³ «Միութիւն», 1924, հ. 9/10, 78:
- ²⁴ Հովհաննես Մալխասյանի հուշագրությունները. էջ 14:
- ²⁵ «Միութիւն», 1925, հ. 1/2, էջ 3:
- ²⁶ «Միութիւն», 1923, հ. 9/10, էջ 75:

- ²⁷ ՀԲԸՄ – 1925, էջ 28:
²⁸ ՀԲԸՄ – 1920-1921, էջ 119:
²⁹ Նույն տեղում, էջ 120:
³⁰ Նույն տեղում:
³¹ «Յուշարար», 1923, ի. 85/90, էջ 928:
³² «Յուշարար», 1923, ի. 81/91, էջ 850:
³³ Տե՛ս Կոկիմոս Պ. Հունահայ գաղութի պատմությունից (1918-1927). Երևան, 1965, էջ 43:
³⁴ Ազատեան Լիպարիտ. Հայ որբերը մեծ եղեռնի, գ. 1, էջ 107:
³⁵ Կոկիմոս Պ. նշվ. աշխ., էջ 46:
³⁶ ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվ, ֆ. 430, ց. 1, գ. 241, ք. 9-11:
³⁷ «Հայաստանի կոչնակ», 1925, 4 ապրիլի, էջ 419:
³⁸ ՀԲԸՄ – 1928, էջ 39-40:
³⁹ ՀԲԸՄ – 1935, էջ 56:
⁴⁰ ՀԲԸՄ – 1922, էջ 27:
⁴¹ Այդ մասին մանրամասն տե՛ս Մելքոնյան Էդ. Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը Խորհրդային Հայաստանում, 1923-1937. Երևան, 1999, էջ 26-36:
⁴² ՀԲԸՄ – 1924, էջ 28:

Резюме

Сиротопримная деятельность Армянского Всеобщего Благотворительного Союза в 1910-1930-х гг.

Эдуард Мелконян

История десятков тысяч армянских детей, оспротивших в результате геноцида армян в Турции, все еще остается одной из наименее изученных.

Спасением и защитой этих детей /что стало возможным лишь после капитуляции Турции в октябре 1918 г./ занимались, в основном, иностранные и армянские благотворительные организации. Среди последних особо значимой была деятельность основанного в 1906 г. в Каире Армянского Всеобщего Благотворительного Союза /АВБС/, который свой первый детский приют «Келекян» основал еще в 1912 г. в Армянской Киликии - в Деортполе.

В конце 1918 г. в Порт-Сайде /Египет/ АВБС открывает свои первые за пределами родины приюты для сирот и женщины. В 1919 г. в освобожденной от турецких войск Киликии АВБС осматривает приюты в Мерсин, Адапе и Алжие, возобновляет деятельность приют «Келекян». После передачи Францией Киликии турецким властям в конце 1921 г. АВБС вынужденно переводит свои учреждения - приюты «Келекян» и «Сисван» - в Бейрут. В том же 1922 г. в Иерусалиме открывает два новых приюта - «Араратян» и «Васпуракан» для более чем 800 сирот. Начиная с 1921 г. АВБС в Алеппо, Бейруте, Каире, Афинах и др. местах основывает специализированные приюты для обучения различным ремеслам. В 1924 г. АВБС организует репатриацию 250 воспитанников своих приютов в Советскую Армению.

Благодаря деятельности приютов АВБС стало возможным не только спасение жизни тысяч сирот, но и сохранение их этнокультурной идентичности в условиях диаспоры.

Summary

The Orphan Care Activity of the AGBU
between 1910-1930.

Edward Melkonian

The History of tens, thousands of Armenian children orphaned through the Genocide of Armenians in Turkey in 1915, remains almost unexposed so far.

The saving and care for the orphans was the purpose of a number of foreign and Armenian benevolent organizations. The Armenian General Benevolent Union (AGBU, established in Cairo) has a special place among these organizations. The AGBU established its first "Kelekian" orphanage-school in Deort-Yol (Cilicia) as far back as in 1912.

By the end of 1918 the AGBU established in Port Said (Egypt) the first orphanages for saved children outside the Motherland. In 1919, following the defeat of Turkey in World War I, the AGBU established orphanages and asylums for widows in Cilicia – Mersin, Adana, Hajin, and reopened the "Kelekian" orphanage. By the end of 1921, when France handed Cilicia over to Turkey, the AGBU moved the "Kelekian" and "Sisvan" orphanages to Beirut. In 1922 the AGBU established two orphanages for 800 orphans in Jerusalem, the "Araratian" and "Vaspourakan". During those years the AGBU also founded orphanage-workshops in Aleppo, Beirut, Athens, etc. In 1924 it made every arrangement to send 250 orphans to Soviet Armenia.

The AGBU's orphanages ensured the survival of thousands of children, and the preservation of their ethnocultural identity.